ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՌՈՒԲԵՆԻ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ XIII-XVI ԴԱՐԵՐՈՒՄ

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ներսիսյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ Եղիազարյան Ա.Ս.
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մկրտումյան Լ.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. ապրիլի 3-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ ՀՀ, 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. փետրվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Արցախի Հասան-Ջալալյանների իշխանական տոհմը հայոց պատմության մեջ ունեցել է լրջագույն դերակատարություն: Նրանց գործունեությունն ուսանելի է ոչ միայն ռազմաքաղաքական, այլև՝ դիվանագիտական, հոգևոր-մշակութային տեսանկյուններից: Չնայած նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային շրջանի որոշ հետազոտողներ ինչ-ինչ անդրադարձներ կատարել են այս տոհմի ներկայացուցիչների, մասնավորապես՝ XIII-XVI դարերում ծավալած գործունեությանը, բայց կարծում ենք, որ այդ գործունեությունն իր ամբողջության մեջ, դեռևս, լիարժեքորեն լուսաբանված և գնահատված չէ: Այդ գնահատումն ունի արդիական նշանակություն մի քանի առումներով: Նախ՝ այս իշխանական տոհմն իր ծագումից և անվանադիր Հասան-Ջալալ-Դոլայից սկսած տվել է անմնացորդ հայրենասիրության, քաջության, քաղաքական ու դիվանագիտական լուծումների վառ օրինակներ: Այդ լուծումներն արդյունավետ են եղել ոչ միայն Արցախի՝ որպես առանձին քաղաքական միավորի պահպանման և ամրապնդման, այլև՝ Հայաստանի և մասնավորապես Կիլիկյան Հայաստանի համար: Բավական է նշել այն կարևոր դերակատարությունը, որն ունեցել է Հասան-Ջալալ-Դոլան Կիլիկիայի Հայկական թագավորության և մոնղոլական պետության միջև ռազմաքաղաքական դաշինքի կնքման գործում: Այս իրողության արդիական հնչեղությունը կայանում է գլխավորապես նրանում, որ դիվանագիտական հարաբերություններում առաջնահերթությունը պետք է տրվի շահերին, որոնցով առաջնորդվելը պետք է բացառի քրիստոնեական պետության մեջ բարեկամի, իսկ ոչ քրիստոնեականի մեջ՝ թշնամի որոնելու թյուր համոզմունքը: Այսինքն, քաղաքական շրջադարձերը պետք է իրականացնել ելնելով ոչ թե քարացած ըմբռնումներից, այլ՝ պահի թելադրանքից, փոփոխվող ռազմաքաղաքական իրադրությունների սթափ գնահատականներից:

Երկրորդ կարևոր դասը Հասան-Ջալալյանների գործունեությունից հետևյալն է՝ դաշնակիցները չեն ծնվում աղերսներով, այլ՝ երբ քեզանից ուժ ես ներկայացնում: Այդ դեպքում քաղաքական խաղացողներն են հաճախ քեզ գտնում: Այս պարզ ճշմարտությունը չափազանց կարևոր է մեր օրերի համար: Եվ վերջապես ատենախոսությունն արդիական է Ադրբեջանի ներկայիս հակահայկական քարոզչության դեմ պատվար ստեղծելու առումով ևս, քանի որ նրանում ապացուցվում է, որ թաթարական ցեղերի այս տարածաշրջան ներխուժելուց շատ առաջ Արցախում արդեն կային հայկական իշխանություններ, որոնք անկախ ռազմաքաղաքական փոխակերպումներից գոյություն են ունեցել նաև այդ ներխուժումներից հետո: Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի թողած հետագծին վերաբերող մեր այս անկողմնակալ, բացառապես օբյեկտիվ փաստերի ու փաստարկների հիման վրա կառուցված ատենախոսությունը կարող է արժանի պատասխան հանդիսանալ ցանկացած կեղծ պատմագրության, որն առնչվում է Արցախի պատմությանն ընդհանրապես, Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի XIII-XVI դարերի գործունեությանը մասնավորապես: **Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի դերակատարությունը հայոց պատմության մեջ XIII-XVI դարերում թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր ոլորտներում:

Հետազոտության ժամանակագրական շրջանակներին համապատասխանող հայկական և օտար սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության մանրազնին համադիր քննությամբ փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները՝

1. Պարզել Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի ծագման հանգամանքները:

2. Լուսաբանել Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի անվանադիր, Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի գործունեությունը:
3. Ճշգրտել Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի 1259թ. Վրաստանում սկսված հակամոնղոլական ապստամբությանը մասնակցություն ունենալու հարցը:
4. Բացահայտել Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի և Զաքարյանների իշխանապետության փոխհարաբերությունները:
5. Ճշգրտել Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի գերեզմանի գտնվելու հնարավոր վայրը:
6. Պարզել Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանության փոխակերպման ընթացքը:
7. Ցույց տալ XIV-XV դարերում Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանության ազդեցությունն ու կշիռը:
8. Ներկայացնել XVI դարում Հասան-Ջալալյանների ունեցած աշխարհիկ իշխանության քաղաքական կարգավիճակի փոփոխման ընթացքը:

Ատենախոսության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը: ՈՒսումնասիրության նորույթը հիմնահարցի հենց առաջադրումն է: Ատենախոսության մեջ ներկայացված և քննության ենթարկված բազմաթիվ հարցեր վիմագրերի, մատենագրական տեղեկությունների, հայկական և օտար սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ուսումնասիրվել են նորովի: Մասնավորապես՝ հանգամանորեն քննության է ենթարկվել Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի անվանադիր, XIII դարի Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը, ճշգրտվել են Հասան-Ջալալյան տոհմի որոշ իշխանների ու կաթողիկոսների ծննդյան, պաշտոնավարման և մահվան թվականները:

Ատենախոսության կիրառական

նշանակությունը կայանում է նրա նորույթում: Ուսումնասիրության մեջ առաջ քաշված հարցադրումներն ու եզրակացությունները, մոտեցումները ու գաղափարները, տեսական ընդհանրացումներն ու մեկնաբանությունները կարող են օգտագործվել քննվող ժամանակաշրջանի տարածաշրջանի և հայոց քաղաքական պատմությանը նվիրված հետազոտություններում: Դրանք կարող են հիմք հանդիսանալ նաև նոր ուսումնասիրություններ կատարելու համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԽԻՍՏ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնցից երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և մեկ հավելվածից:

Աշխատության ծավալը 146 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվում է թեմայի նպատակն ու խնդիրները, գիտական մշակվածության աստիճանը, նշվում են ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթը և տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին **«ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄԸ»** վերնագրով գլուխը նվիրված է իշխանական տոհմի ծագումնաբանության հարցի պարզաբանմանը:

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին, հետազոտելով իրեն հայտնի

աղբյուրները՝ արձանագրել է, որ հայոց նախնի Հայկի ժառանգներից մեկը՝ Սիսակ անունով, տեր է դարձել Հայաստանի արևելյան մասին: Նրա անունով այս աշխարհը կոչվել է Սիսական: Սիսակի սերունդները բազմացել, լցրել են այս կողմերը: Եվ այս Սիսակի ժառանգներից մեկն էլ՝ Առան անունով, որ անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում, Հայոց Վաղարշակ թագավորի կողմից մ.թ.ա. II դարում կողմնակալ նշանակվեց Կուր գետի աջափնյա հայ բնակչության վրա: Խորենացին հայտնում է նաև, որ Առանի զավակներից են սերվել ՈՒտիքի ժողովուրդը և Գարդմանի, Ծավդեքի (Արցախի) ու Գարգարացիների իշխանությունները[1]:

Սրանով Խորենացին ցույց է տվել, որ Արցախի և ՈՒտիքի նախարարական տների ներկայացուցիչները բուն հայկական են, սերված Հայկ նահապետի ժառանգներից: Առանից «...սկիզբ առած նախարարական տներն էլ պարսկական տիրապետության օրերում, պարսկերենի ազդեցությամբ կոչվեցին Առանշահիկ, որ նշանակում է «Առանի շահիկ-տիրակալ»»[2]: Առանշահիկների ծագման մասին Խորենացու մեկնաբանությունը հետագա հայ պատմիչները ևս ընդունել են: Այսպես, VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին Հայկ նահապետի ժառանգներից Առանից սերված Առանշահիկներին համարում է Արցախի, ինչպես նաև ՈՒտիքի իշխանական տների նախնիներ[3]: Նույն տեսակետին է

---

[1]Մատենագիրք Հայոց, հ. Բ, Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Անթիլիաս-Լիբանան, «Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան», 2003, էջ 1785-1786, 1859:

[2]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», 1975, էջ 56:

[3]Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երեւան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն», 1983, էջ 8:

նաև XIII դարի պատմիչ՝ Կիրակոս Գանձակեցին[4]: Արաբական տիրապետության վերջում Արցախի Առանշահիկները իրենց իշխանությունը տարածում են հիմնականում նահանգի նախալեռնային ու լեռնային գավառների վրա, որոնք մեկ ընդհանուր անունով կոչվում էին Խաչեն[5]:

XII դարի սկզբին Խաչենի տարածքի վրա գոյանում են Առանշահիկներից սերված երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի՝ ի դեմս իշխան Վախթանգ Մեծի[6] և Հաթերքի՝ ի դեմս գերագահ իշխան Հասանի (1142-1182թթ.)[7]:

Դարավերջին վերոհիշյալ երկճյուղ իշխանությանը ավելանում է երրորդը՝ նույնպես Առանշահիկներից սերող Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը[8], ի դեմս իշխան Հասանի[9]:

XII դարի սկզբին Ներքին Խաչենի իշխանն էր Վախթանգ Մեծը: Ցավոք, մեզ չի հասել անմիջապես Վախթանգ Մեծ իշխանի անունից նրա գործունեության վերաբերյալ և ոչ մի վկայություն: Սակայն հարկ է նշել, որ թե՛ նրա որդու՝ Հասան Մեծի և թե՛ թոռան՝ Վախթանգ-Տանգիկի մասին խոսող պատմական վկայություններում հիշատակված է նաև Վախթանգ Մեծի անունը:

XIII դարի սկզբին Մեծ Հայքի Արցախ նահանգի Ներքին Խաչեն գավառի իշխանն էր Հասան Մեծի որդի Վախթանգը, որն աղբյուրներում կոչվել է նաև Վախթանգ-Տանգիկ:

---

[4]Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն», 1961, էջ 193:

[5]ՈՒլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, «Մ. Վարանդեան» հրատ., 1994, էջ 55:

[6]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 135-136:

[7]Նույն տեղում, էջ 145:

[8]Նույն տեղում, էջ 152:

[9]Նույն տեղում, էջ 51:

Վախթանգ-Տանգիկի կնոջ անունը Խորիշահ էր, ով հայ-վրացական զինված ուժերի ամիրսպասալար, իշխան Բագրատունի Սարգիս Զաքարյանի և Սահակադուխտ Արծրունու դուստրն էր՝ ամիրսպասալարի պաշտոնում Սարգիս Զաքարյանին հաջորդած Զաքարեի և Վրաց արքունիքի աթաբեկ Իվանեի քույրը[10]:

Վախթանգ-Տանգիկն ու Խորիշահն ունեցել են յոթ զավակ՝ չորս որդի՝ Հասան-Ջալալ-Դոլան, Զաքարեն, Իվանեն, Դոլան և երեք դուստր՝ Մարինոն կամ Մարինան ու ևս երկու դուստր, որոնց անունները, ցավոք, որևէ ձևով չեն արձանագրվել և մեզ չեն հասել:

Ներքին Խաչենի իշխան Վախթանգ-Տանգիկը վախճանվել է 1214թ.:

Վախթանգ-Տանգիկի մահից հետո նրան հաջորդում է իր ավագ որդին՝ Հասան-Ջալալ-Դոլան: Վերջինս իշխել է բավականին երկար՝ 47 տարի՝ թողնելով չափազանց հարուստ կենսագրություն:

Ներքին Խաչենի իշխանական տունը XIII դարի վերջերից սկսած կոչվում է Հասան-Ջալալ-Դոլայի անունով, սակայն առանց «Դոլա»-ի, պարզապես՝ Հասան-Ջալալյան: Այս ազգանունն էին կրում նաև այն հոգևոր գործիչները, ովքեր սերում էին այս իշխանական տոհմից և ժառանգաբար XIII դարի կեսերից իրենց ձեռքում էին կենտրոնացրել Ներքին Խաչեն գավառի եպիսկոպոսական, իսկ XIV դարի վերջերից նաև ողջ Աղվանից կաթողիկոսական գավազանը[11]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հասան-Ջալալյան իշխանական տոհմի

---

[10]Բարխուտարեանց եպիսկոպոս Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, «Գանձասար աստուածաբանական կենտրոն», 1999, էջ 346, նաև ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 141, նաև Մանանդյան Հ., Երկեր, հ. III, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Սելջուկյան շրջանից մինչև Սեֆյանների հաստատումը Իրանում (XI-XVդդ.), Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 1977, էջ 137:

[11]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 296:

անվանադիր Հասան-Ջալալ-Դոլան սերում է հայոց ամենանշանավոր ու հռչակավոր տոհմերից:

Ատենախոսության երկրորդ **«ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ԴՈԼԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (XIII ԴԱՐ)»** վերնագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին **«Արցախի իշխանաց իշխանի շինարարական գործունեությունը»** վերնագրով ենթագլուխը նվիրված է Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի շինարարական գործունեության լուսաբանմանը:

Նախքան մոնղոլ-թաթարների հարձակումը Արցախի նորընծա իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլան խաղաղության կարճատև ժամանակաշրջանն օգտագործեց ազգային մեծ արժեքների ստեղծման, եկեղեցու շենացման, հոգևոր-մշակութային օջախների շինարարության ու զարգացման համար: Եվ հատկանշականն այն է, որ նա այդ ամենն անում էր ոչ միայն Արցախում, այլև նրա սահմաններից դուրս, մասնավորապես՝ Կեչառիսում և այլուր: Մշտապես իշխանի հետ էր նաև նրա կինը՝ իշխանուհի Մամքանը, ով ինչպես ամուսնու և միակ արու զավակ Աթաբեկ-Իվանեի հետ, այնպես էլ նրանցից առանձին, եկեղեցիներ է կառուցել ու նորոգել, կանգնեցրել է բազում խաչքարեր, օժանդակել մատյաններ ստեղծելուն, ապա նվիրել է հայրենի եկեղեցիներին ու վանքերին:

Հասան-Ջալալ-Դոլայի շինարարական գործունեության մասին պատմող առաջին արձանագրությունը, պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ գյուղատեղում, որի մասին վկայում են այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղի մոտ գտնվող հետքերը, ուր 1229թ. Հասան-Ջալալ-Դոլան կառուցել է Սուրբ Ստեփանոս եկեղեցին:

Արցախի իշխանաց իշխանը կառուցել է նաև ամրոցներ ու բերդեր, որոնցից հիշատակելի են Խոխանաբերդն ու իշխանական ապարանք

Դարպասները: Արցախի իշխանաց իշխանը կառուցել է այլ ամրոցներ ևս, ինչպիսիք են Դեդը, Ծիրանաքարը և այլն, սակայն Խաչենի իշխանանիստը հանդիսացել է Խոխանաբերդը[12]: Այն գտնվում է Գանձասարի եկեղեցուց հարավ՝ Խաչեն գետի աջ ափին, և կոչվում է նաև Թարխանաբերդ, քանի որ գտնվում է Թարխանասար կոչվող լեռան վրա:

1248թ. էլ Հասան-Ջալալ-Դոլան ու իր կինը՝ Մամքանը վերանորոգել են մոնղոլ-թաթարների ավերած Կեչառիսի վանքը:

Սակայն Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի շինարարական գործունեության գլուխգործոցն է համարվում Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի անունը կրող եկեղեցին, որի կառուցումը նա սկսել է 1216թ.:

Եկեղեցու շինարարությունը տևել է 22 տարի և ավարտվել է 1238թ.[13]: Հոգևոր կենտրոնի օծումը տեղի է ունեցել 1240թ. հուլիսի 22-ին՝ Վարդավառի մեծ տոնի օրը[14]:

Երկրորդ **«Հասան-Ջալալ-Դոլայի արտաքին հարաբերությունները»** վերնագրով ենթագլուխը նվիրված է Արցախի իշխանաց իշխանի օտարերկրյա թագավորների, իշխանների հետ ունեցած հարաբերությունների, դեպի Արցախ մոնղոլ-թաթարների կատարած արշավանքի ընթացքում վերջիններիս հետ բանակցությունների մեջ մտնելու այդպիսով Արցախն ու արցախահայությանը փրկելու, ինչպես նաև մոնղոլ-թաթարների բարձրագույն ղեկավարության շրջանում ունեցած իր դիրքն ու հեղինակությունն ի շահ Կիլիկյան Հայաստանի օգտագործելու նպատակով ձեռարկած քայլերի վերլուծությանը:

Երրորդ **«Արցախի իշխանաց իշխանի ողբերգական վախճանն ու նրա գործունեության գնահատականը»** վերնագրով ենթագլուխը նվիրված է Հասան-Ջալալ-Դոլայի մոնղոլ-

---

[12]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 136:
[13]Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 38-39:
[14]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 177:

թաթարական պետության տարածաշրջանային ներկայացուցիչների հետ ունեցած լարված փոխհրաբերություններին, այդ փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով Արցախի իշխանաց իշխանի ձեռնարկած քայլերին, դրանց հաջորդած Հասան-Ջալալ-Դոլայի ողբերգական վախճանին վերաբերող հարցերին: Հիշյալ ենթագլխում տրված է նաև Արցախի իշխանաց իշխանի գործունեության գնահատականը:

Ատենախոսության երրորդ **«ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ»** վերնագրով գլուխը նվիրված է իշխանական տոհմի XIV-XV դարերի ներկայացուցիչների գործունեության լուսաբանմանը:

Փաստերի անաչառ քննության հիմամբ արվել է պնդում առ այն, որ ինչպես նախընթաց դարերում, այնպես էլ XIV-XV դարերում Ներքին Խաչենի Հասան-Ջալալյանները պահպանում էին դեռևս XIII դարում ձեռք բերած իրենց գերակա դիրքերը, որոնց ենթակա էին Ծար գավառի Դոփյան իշխանական տունը և նրանից բաժանված մյուս փոքր իշխանությունները: Աշխարհիկ իշխանությունից բացի Հասան-Ջալալյանների ձեռքում էր գտնվում նաև Արցախի հոգևոր իշխանությունը՝ նրանց էր պատկանում Գանձասարի կաթողիկոսական գավազանը:

Ատենախոսության չորրորդ **«ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»** վերնագրով գլուխը նվիրված է XVI դարում Հասան-Ջալալյանների ունեցած աշխարհիկ իշխանության քաղաքական կարգավիճակի փոփոխման ընթացքի վերլուծությանը:

XVI դարի առաջին կեսին, ինչպես վկայում են ժամանակի աղբյուրները, Արցախի քաղաքական համակարգում տեղի է ունենում լրջագույն փոփոխություն: Ավելի քան 350 տարի (մոտավորապես 1170-ական թվականներից մինչև 1520-ական թվականները) անընդմեջ Արցախի ժողովրդի

կառավարումն իրականացնող Խաչենի՝ սկզբում եռաճյուղ (Ներքին Խաչենի, Հաթերքի և Վերին Խաչենի կամ Ծարի), իսկ այնուհետև երկճյուղ (Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի) իշխանությանը, փոխարինելու է գալիս նոր քաղաքական ինստիտուտ: Վարչատարածքային նոր բաժանման համաձայն Արցախի տարածքը բաժանվում է հինգ գավառների, որոնցից յուրաքանչյուրում ձևավորվում է մեկ վարչական միավոր, որը պատմությանը հայտնի է մելիքություն անվամբ: Յուրաքանչյուր մելիքության կամ գավառի ղեկավարը կոչվում էր մելիք, ով հանդիսանում էր տվյալ մելիքության կամ գավառի ռազմաքաղաքական ղեկավարը: Հասան-Ջալալյանների իշխանական տունը ներկայացրել է Արցախի հինգ մելիքություններից մեկը՝ Խաչենի մելիքությունը: Խաչենի մելիքության վերափոխված տարածքը մոտավորապես ընդգրկում էր հիմնականում այժմյան Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանը և Մարտակերտի շրջանի հարավը[15]:

Հիմնվելով ժամանակի քաղաքական կյանքը բնորոշող հրապարակի վրա եղած հասանելի աղբյուրների վրա՝ ներկայացվել է մելիքությունների կազմավորման հանգամանքներն ու մոտավոր ժամանակը՝ միաժամանակ ցույց է տրվել, թե Հասան-Ջալալյանների տոհմից ո՞վ է առաջինը կրել «մելիք»-ի տիտղոսը:

Փաստերի հիման վրա կատարելով համապատասխան վերլուծություն՝ արվել է պնդում այն մասին, որ XIV դարի վերջերից սկսած փոփոխություն է տեղի ունենում նաև Հասան-Ջալալյանների ունեցած աշխարհիկ իշխանության ոլորտում: Ընդունված «իշխան» տիտղոսի հետ միաժամանակ Հասան-Ջալալյան տոհմի ֆեոդալ-կառավարիչները սկսում են հանդես գալ «պարոն»,

[15]Մելքոնեան Ա., Հայկական Քարվաճառ եւ Աղահեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», N 15, Երեւան, 1993, էջ 26:

իսկ XVI դարի առաջին կեսից՝ «բեկ» տիտղոսներով:

Անհրաժեշտ և բավարար փաստերի բացակայության պատճառով, սակայն, դեռևս հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե Հասան-Ջալալյանների տոհմից ո՞վ է եղել այն իշխանը, ով Իրանի շահ Թահմասպ I-ից, որպես մելիքության ինստիտուտի սկզբնավորողի, XVI դարի երկրորդ քառորդում ստացել է «մելիք» կոչվելու մասին շահական հրովարտակ: Համաձայն պահպանված և մեզ հասած պատմական վկայությունների՝ Հասան-Ջալալյանների տոհմից «մելիք» տիտղոսով պատմությանը հայտնի առաջին տիրակալը Աթաբեկ Հասան-Ջալալյանն է, ով 1652 թվականի դրությամբ հանդիսացել է Խաչեն գավառի մելիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Այսպիսով, ամփոփելով XIII-XVI դարերում հայոց պատմության մեջ Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի ունեցած դերակատարության ուսումնասիրությունը՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները՝

1. Հասան-Ջալալյանների իշխանական տոհմի անվանադիրը հանդիսացել է 1214-1261թթ. Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլան, ով սերել է Արցախի Առանշահիկների թագավորական տոհմից: Նա ազգությամբ եղել է հայ: Հասան-Ջալալ-Դոլայի ողբերգական վախճանից հետո նրա սերունդները կոչվել են նրա անունով՝ Հասան-Ջալալյան:

2. Մեծ է Արցախի իշխանաց իշխանի ավանդը Հայաստանի ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ հոգևոր-մշակութային կյանքում: Նրա անմիջական հովանավորությամբ ու նախաձեռնությամբ հայոց աշխարհում կառուցվել ու վերանորոգվել են բազմաթիվ հոգևոր կենտրոններ: Սակայն, Հասան-Ջալալ-Դոլայի շինարարական գործունեության բարձրակետն է հանդիսանում Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Նա լրջագույն դերակատարություն է ունեցել նաև Հայաստանի արտաքին հարաբերություններում: Նրա գործուն միջնորդության շնորհիվ Կիլիկյան հայոց

թագավորությունը փրկվել է թաթար-մոնղոլական կործանարար հարձակումից: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եզակի երևույթ էր: Հասան-Ջալալ-Դոլայի ողբերգական վախճանից հետո, նրա սերունդները կոչվել են Հասան-Ջալալյաններ: Այս նշանավոր տոհմը բազում դարեր շարունակ իր ձեռքում է կենտրոնացրել Արցախի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը:

3. Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլան չի մասնակցել է Վրաստանում բռնկված հակամոնղոլական ապստամբությանը:

4. Ի տարբերություն Հաթերքի և Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունների, Ներքին Խաչենի իշխան Հասան-Ջալալ-Դոլան չէր գտնվում Զաքարյանների գերիշխանության ներքո, այլ պահպանում էր իր հարաբերականորեն անկախ կարգավիճակը հայ քաղաքական միջավայրում:

5. Գանձասարի եկեղեցու գավթի հարավարևմտյան մասում՝ ավելի մոտ եկեղեցու արևմտյան մուտքին, կա առանց արձանագրության մի տապանաքար, որի վրա փորագրված են նույն նախշազարդերը, ինչպիսիք որ կան 1431թ. վախճանված Արցախի գահերեց իշխան Ջալալ Մեծի գերեզմանի վերոնշյալ տապանաքարի վրա: Կարծում ենք՝ առանց արձանագրության տապանաքարը կարող է պատկանել Հասան-Ջալալ-Դոլային, որի տակ գտնվում են Արցախի իշխանաց իշխանի մարմնի մասունքները:

Հոր գերեզմանի վրա դնելով առանց արձանագրության տապանաքար՝ Աթաբեկ-Իվանեն այդպիսով պաշտպանել է Հասան-Ջալալ-Դոլայի գերեզմանը՝ թույլ չտալով, որպեսզի մոնղոլ-թաթարները պղծեն այն:

Նկատի ունենալով Հասան-Ջալալ-Դոլայի և մոնղոլ-թաթարական իշխանության բարձրագույն ներկայացուցիչների լարված փոխհարաբերությունները, որին զոհ գնաց Արցախի իշխանաց իշխանը, ինչպես նաև այն, որ համաձայն Կիրակոս Գանձակեցու հաղորդման՝ Հասան-

Ջալալ-Դոլայի որդին՝ Աթաբեկ-Իվանեն, ուղարկեց հավատարիմ մարդիկ և գողանալ տվեց հոր մարմնի մասունքներն ու բերեց Արցախ և ամփոփեց Գանձասարի վանքում՝ կարելի է հավանական համարել, որ մոնղոլ-թաթարները, մասնավորապես՝ Հուլավու խանը, Արղունն ու նրա ստորադրյալները, տեղեկանալով Աթաբեկ-Իվանեի՝ հոր մարմնի մասունքները գողանալու մասին, կփորձեին գտնել Արցախի իշխանաց իշխանի գերեզմանը՝ այն պղծելու նպատակով: Ահա ամենայն հավանականությամբ հենց այս պատճառով էլ Հասան-Ջալալ-Դոլայի որդին հոր գերեզմանին դրված տապանաքարի վրա չի արձանագրել ո՛չ նահատակվածի անունը և ո՛չ էլ նահատակության տարեթիվը:

6. XIII դարի վերջում Հասան-Ջալալյանների իշխանությունն ընդլայնվում է: Արցախի աշխարհիկ իշխանության հետ միասին նրանց ձեռքն է անցնում նաև Ներքին Խաչեն գավառի հոգևոր իշխանությունը: Ժամանակի արձանագրությունների մեջ հիշատակված իշխան Ջալալ I-ը ներկայացնում էր աշխարհիկ իշխանությունը, իսկ Գանձասարի վանքի առաջնորդ Հովհաննեսն էլ՝ Հասան-Ջալալ-Դոլայի եղբոր՝ Իվանեի որդին, հոգևոր իշխանությունը: XIV դարի վերջերից սկսած, արդեն, Հասան-Ջալալյաններն ընդլայնել են իրենց հոգևոր իշխանությունը՝ աշխարհիկ իշխանության հետ միասին իրենց ձեռքում կենտրոնացնելով նաև ողջ Արցախի հոգևոր իշխանությունը Աղվանից կաթողիկոսական գավազանի տեսքով: Նույն դարի վերջերից սկսած փոփոխություն է տեղի ունենում նաև Հասան-Ջալալյանների ունեցած աշխարհիկ իշխանության ոլորտում: Ընդունված «իշխան» տիտղոսի հետ միաժամանակ Հասան-Ջալալյան տոհմի ֆեոդալ-կառավարիչները սկսում են հանդես գալ «պարոն», իսկ XVI դարի առաջին կեսից՝ «բեկ» տիտղոսներով:

7. XIV-XV դարերում Հասան-Ջալալյանները պահպանում էին իրենց գերակա դիրքերը, որոնց ենթակա էին Ծար գավառի Դոփյան իշխանական տունը և նրանից բաժանված մյուս փոքր իշխանությունները:

8. XVI դարի պատմական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ դարի առաջին կեսին Արցախի քաղաքական համակարգում տեղի է ունենում լրջագույն փոփոխություն: Ավելի քան 350 տարի (մոտավորապես 1170-ական թվականներից մինչև 1520-ական թվականները) անընդմեջ Արցախի ժողովրդի կառավարումն իրականացնող Խաչենի՝ սկզբում եռաճյուղ (Ներքին Խաչենի, Վերին Խաչենի կամ Ծարի և Հաթրեքի), իսկ այնուհետև երկճյուղ (Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի) իշխանությանը, փոխարինելու է գալիս նոր քաղաքական ինստիտուտ, որը պատմությանը հայտնի է մելիքություն անվամբ: Վարչատարածքային նոր բաժանման համաձայն Արցախի տարածքը բաժանվում է հինգ գավառների, որոնցից յուրաքանչյուրում ձևավորվում է մեկ մելիքություն: Հասան-Ջալալյանների իշխանական տոհմը ներկայացրել է Արցախի հինգ մելիքություններից մեկը՝ Խաչենի մելիքությունը:

Համաձայն պահպանված և մեզ հասած պատմական վկայությունների՝ Հասան-Ջալալյանների տոհմում «մելիք» տիտղոսով պատմությանը հայտնի առաջին տիրակալը Աթաբեկ Հասան-Ջալալյանն է, ով 1652 թվականի դրությամբ հանդիսացել է Խաչեն գավառի մելիքը:

ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ներկայացված է Հասան-Ջալալյան իշխանական տան տոհմածառը XIII-XVI դարերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. С. Хасан-Джалалян, К вопросу о генеалогии правителей Хачена, “Генеалогия народов Кавказа. Традиции и современность”, материалы международной научно-практической конференции, Владикавказ, “ИПО СОИГСИ”, 2009, с. 237-240.

2. Ս. Հասան-Ջալալյան, Արցախի մելիքությունների կազմավորումն ու իրավաքաղաքական կարգավիճակը, «Հայագիտական հանդես», N 3-4, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2013, էջ 237-251:

3. Ս. Հասան-Ջալալյան, Հասան-Ջալալյանների գործունեությունը XIV-XV դարերում, «Կանթեղ» գիտական հոդվածներ, N 3, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016, էջ 71-80:

4. Ս. Հասան-Ջալալյան, Արցախ-Խաչենի գահերեց իշխան Ջալալ IV Հասան-Ջալալյանի հանդիպումը Իրանի շահ Աբաս I-ի հետ, «Գիտական աշխատություններ», N XIX, Գյումրի, «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն», 2016, էջ 79-83:

5. Ս. Հասան-Ջալալյան, XIII դարի Արցախի իշխանաց իշխան, թագավոր Հասան-Ջալալ-Դոլայի ծագումը և գործունեությունը, «Գիտական տեղեկագիր», պրակ 1, Ստեփանակերտ, «ԱրՊՀ հրատարակչություն», 2016, էջ 177-186:

6. С. Асан-Джалалян, Князь Арцаха-Хачена Мехраб Бек Асан-Джалалян, “Регион и мир”, том VIII, N 1, Ереван, “Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона”, 2017, с. 48-50.

АСАН-ДЖАЛАЛЯН СТЕПАН РУБЕНОВИЧ

РОЛЬ КНЯЖЕСКОЙ ДИНАСТИИ АСАН-ДЖАЛАЛЯНОВ В АРМЯНСКОЙ ИСТОРИИ В XIII-XVI ВЕКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 3-го апреля 2020 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА по адресу: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Княжеский род Арцаха Асан-Джалаляны сыграли значительную роль в истории Армении. Их деятельность поучительна не только в военно-политическом, но и в дипломатическом, духовно-культурном плане. Хотя некоторые ученые из досоветской, советской и постсоветской эпохи уже упоминали о деятельности представителей этой династии, особенно в XIII-XVI веках, но мы считаем, что эта деятельность в целом еще не до конца изучена и оценена. Эта оценка актуальна по нескольким причинам.

Во-первых, это княжеская династия, с момента своего происхождения и во главе основателя Асан-Джалала-Дола, дала яркие примеры патриотизма, мужества, политических и дипломатических решений. Эти решения были эффективны не только для сохранения и консолидации Арцаха как отдельной политической единицы, но и для Армении и, в частности, Киликии. Достаточно упоминуть о важной роли, которую сыграл Асан-Джалал-Дола в создании военно-политического союза между Армянским королевством Киликией и монгольским государством. Актуальность этой реальности заключается главным образом в том, что в дипломатических отношениях приоритет должен отдаваться интересам, руководствием которых должно исключать поиска родственников в христианских государствах и в поиске врагов в не христианских государствах. То есть политические решения должны быть приняты не на основе представлений, а на основе требований, трезвых оценок изменяющейся военно-политической ситуации. Второй важный урок из деятельности Асан-Джалалянов заключается в том, что союзники рождаются не с мольбой, а тогда когда ты силен. В этом случае политические

игроки часто находят вас. Эта простая истина чрезвычайно важна в наши дни.

И наконец, тезис актуален с точки зрения создания опоры против нынешней антиармянской пропаганды Азербайджана, поскольку он доказывает, что до вторжения в этот регион татарских племен уже существовали армянские власти в Арцахе, которые существовали после этих вторжений, независимо от военно-политических преобразований. Основная цель диссертации - изучить роль княжеской династии Асан-Джалалянов в истории Армении как в светской, так и в духовной сфере XIII-XVI веков.

Новизна исследования это вопросы которые заданы по иному. Многие вопросы, представленные в диссертации и изученные на основе анализа литографий, библиографической информации, армянских и зарубежных источников и профессиональной литературы, были изучены по-новому. В частности, были тщательно изучены внутренняя и внешняя политика кандидата на пост правящей династии Асан-Джалалянов, арцахского князя князей XIII века Асана-Джалала-Дола, а также даты рождения, правления и смерти некоторых князев и католикосов династии Асан-Джалалян.

Практическая значимость диссертации заключается в ее новизне. Исследовательские вопросы и выводы, подходы и идеи, теоретические обобщения и интерпретации, предложенные в исследовании, могут быть использованы в исследованиях рассматриваемого периода и в исследованиях о политической истории Армении. Они также могут быть основой для нового исследования.

HASAN-JALALYAN STEPAN RUBEN

THE ROLE OF THE DYNASTY OF HASAN-JALALYANS IN THE ARMENIAN HISTORY IN THE XIII-XVI CENTURIES

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on April 3, 2020, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMERY

The dynasty of Hasan-Jalalyans of Artsakh played a significant role in the history of Armenia. Their activity is instructive not only in the military-political, but also in the diplomatic, spiritual and cultural plan. Although some scholars from the pre-Soviet, Soviet and post-Soviet era have already mentioned the activities of representatives of this tribe, especially in the XIII-XVI centuries, we believe that this activity as a whole has not yet been fully clarified and evaluated. This assessment is relevant in several areas. Firstly, this dynsaty, from its origin and the famous Hasan-Jalal-Dola, gave vivid examples of patriotism, courage, political and diplomatic decisions. These decisions were effective not only for preserving and strengthening Artsakh as a separate political unit, but also for Armenia and, in particular, Cilicia. It is enough to note the important role played by Hasan-Jalal-Dola in creating a military-political alliance between the Armenian kingdom of Cilicia and the Mongolian state. The relevance of this reality lies mainly in the fact that in diplomatic relations priority should be given to interests, whose leadership should exclude false faith in the search for a friend in a Christian state, and the enemy in non-Christian state.

The second important lesson from the activities of the Hasan- Jalalyans is that allies are not born with prayer, but with your strength. In this case, political players often find you. This simple truth is extremely important today. And finally, the thesis is

relevant from the point of view of creating support against the current anti-Armenian propaganda of Azerbaijan, since it proves that before the invasion of the Tatar tribes in this region, Armenian authorities already existed in Artsakh, which existed after these invasions, regardless of the military-political transformations. The main purpose of the dissertation is to study the role of the ruling Hasan-Jalalyans dynasty in the history of Armenia both in the secular and spiritual spheres in the XIII-XVI centuries. The novelty of the study is the giving questions in the new way. Many questions presented in the dissertation and studied on the basis of analysis of lithographs, bibliographic information, Armenian and foreign sources and professional literature were studied in a new way. In particular, the internal and foreign policies of the candidate for the post of the ruling dynasty Hasan-Jalalyans, the 13th-century Artsakh Prince of Princes Hasan-Jalal-Dola, as well as date of the birth, possession and death of some princes and Catholics of the Hasan-Jalalyans dynasty were carefully studied.

The practical significance of the dissertation lies in its novelty. The research questions and conclusions, approaches and ideas, theoretical generalizations and interpretations proposed in the study can be used in studies of the period under review and in studies about the political history of Armenia. It can also be the basis for new research.